

Բ. Առ առաջնորդութեամբ Գարրիէլ Արքեպիսկոպոսի՝ վասն անհաշտ վարմանց իւրոց ընդ միտրանակիցս իւր եւ խռովայոյդ բնաւորութեանն՝ հրամանաւ Կոնսիստորիալի արդեւալ է ի քահանայադործութենէ վեցամսեայ ժամանակաւ:

Գ. Յօրէ կարգելոյ Յովնաննէս քահանայի յօգնականութիւն Սահառունեանց քահանայի, բաղմաձիւ յայտարարութիւնք Կոնսիստորիալի եւ զանդատադիրք Սահառունեանց քահանայի բողոքեն զնմանէ ԹԼ՝ նա յափշտակէ զհասոյթս Սահառունեանց քահանայի, բնաւ չկատարէ զօգնականութեանն պարտաւորութիւն եւ վարի միշտ ընդ Սահառունեանց քահանայի խռովութեամբ եւ ամբարշտութեամբ:

Դ. Ի յայտարարութենէ Կոնսիստորիալին Վրաստանի ի 48 փետրվարի 1881 ամի համար 327 երեւի, զի Յովնաննէս քահանայն Թէմուրազեանց կատարեալ է զպատկ Աւագոյ Բեշիշեանց ընդ Հոիփիմեայ Մինտեանց ցոյցանելով զնոռս Տփիսեանցի եւ ծախ իւր, մինչդեռ առաջինն ի նոցանէ — Բեշիշեանցն է Շուշեցի եւ ունի անդ կին եւ որդիս:

Ե. Ի յայտարարութենէ նոյն Կոնսիստորիալի ի 6 Մարտի 1884 ամի երեւի, զի Յովնաննէս քահանայն Թէմուրազեանց ըստ վաղեմի խռովարար բնաւորութեան իւրում զանաւարեալ է զժամակոչս ի մէջ եկեղեցւոյ եւ հայհոյէ միշտ զմիաբանակիցս իւր եւ զԱւագ քահանայն եկեղեցւոյ, եւ ի ստուգելն ի նմանէ յԱտենի Կոնսիստորիալին զայնմանէ՝ նա յանդգնութեամբ պատասխանեալ եւ ելեալ է յԱտենէն: Ս. Սինօզնի վասն պատգիկ յանցանաց պատուիրեալ է Կոնսիստորիալին Վրաստանի տաւրել զՅովնաննէս քահանայն ի վասն Հաղբաղայ յապաշխարարութիւն. իսկ նա ոչ անտացեալ հրամանի Կոնսիստորիալի, միջոցաւ հաւատարմատարի խնդրեալ է զպատճէն դործոց իւրոց առ ի բողոքել զՀոգեւոր իշխանութենէ:

Վասնորոյ Ս. Սինօզնի գտեալ զնա — զՅովնաննէս քահանայն Թէմուրազեանց աղ եւս անուղղելի՝ ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս հրամանագրեաց իսպառ յոժել զնա ի կարգէ քահանայութեան ընդ ձեռն Թեմ. Ատենի Վրաստանի սահմանեալն կարգաւ եւ զասել ընդ հարկատու աշխարհականս, զորմէ եւ միջոցաւ Արատ ամապրոյս հրատարակել ի զիտութիւն համայն Հայոց:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց տեսանելով որ արեւդաներից ոմանք տգիտութեամբ կամ ամբարտաւանութեամբ՝ առանց ստացած լինելոյ մասնաւոր իշխանութիւն վարդապետութեան համարձակութեանն պաշտօնական գրագրութեանց մէջ փոխանակ Խէչույ ստորագրելոյ՝ վարդապետ ստորագրել, պատուիրեց զգուշացնել, որ եթէ միւսանգամ արեւդաներից մին համարձակութիւն քարձր քան զիւր կոչումն վարդապետ ստորագրել պաշտօնական գրագրութեանց մէջ, անշուշտ կենթարկուի պատասխանատուութեան եւ պատժոց: